ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սևան համայնքի Գեղամավան բնակավայրի մասնակցային բյուջետավորման հայտի հանրային քննարկման

Գ. Գեղամավան 21.05.2025թ

Հիմք ընդունելով մասնակցային բյուջետավորման գործընթացի ընթացակարգի պահանջները, 2025 թվականի մայիսի 21-ին Սևան համայնքի Գեղամավան բնակավայում տեղի ունեցավ Գեղամավան բնակավայրի բնակիչ Արման Հովհաննիսյանի կողմից ներկայացված «Ակտիվ հանգստի և առողջ ապրելակերպի խրախուսումը լավ ապագայի գրավականն է » մասնակցային բյուջետավորման հայտի հանրային քննարկում:

Մասնակցում էին Գեղամավան բնակավայրի վարչական ղեկավար Գ. Խաչատրյանը, Սևանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Լ. Հայրապետյանը, Սևան համայնքի ղեկավարի օգնական Ս. Համբարձումյանը, հայտի հեղինակ Ա. Հովհաննիսյանը և բնակավայրի բնակիչներ:

Մասնակիցներին ներկայացվեց Գեղամավան բնակավայրի բնակիչ Ա. Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայտի բովանդայությունը և առաջարկվող ծրագրի իրականացման կարևորությունը Սևան համայնքի բնակավայրերի համաչափ զարգացման ապահովման տեսակետից: Նշվեց, որ Գեղամավան բնակավայրի նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաները չունեն ժամանցի և ակտիվ հանգստի հնարավորություն, ինչը իր բացասական ազդեցությունն է թողնում երեխաների ֆիզիկական լիարժեք զարգացման վրա և առաջարկվող ծրագրի կյանքի կոչումը էապես կփոխի բնակավայրի նախադպրոցական և դպրոցական հասակի երեխաների առօրյան, դարձնելով այն ավելի հագեցած ու լիարժեք:

Կարևորելով մասնակցային բյուջետավորման գործընթացը, նշվեց, որ այն հրաշալի հնարավորություն է, որպեսզի համայնքային մակարդակում կայացվող որոշումները անմիջական և ուղղակի ազդեցություն ունենան մարդկանց կյանքի և կեցության վրա:

Մասնակիցների կողմից հավանության արժանացավ ծրագիրը ամբողջությամբ և հատկապես ծրագրի իրականացման համար նախատեսված տարածքը, ավելի բարեկարգ ու հարմարավետ կդարձնի բնակավայրը:

Քննարկման արդյունքները ամփոփելով բնակավայրի վարչական ղեկավարը առաջարկեց և հորդորեց բնակիչներին ցուցաբերել ակտիվություն, մասնակցել համայնքի կառավարմանը և մայիսի 23-ից մեկնարկող մասնակցային բյուջետավորման ծրագրերի քվեարկությամբ, հնարավորություն ստեղծել Գեղամավան բնակավայրում կյանքի կոչելու ներկայացված ծրագիրը:

Մասնակիցներ՝

Գ. Խաչատրյան

Լ. Հայրապետյան

Ա. Հովհաննիսյան

Ս. Համբարձումյան